ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

կայացած 04. 12. 2012թ. Ողջաբերդ համայնքի վարչական շենք

Ժողովին մասնակցում էին համայնքի 5 ավագանիները և համայնքի բնակիչներից 70-ը:

Օրակարգ

1. Անցած մեկ տարվա աշխատանքները համայնքում
2. Համայնքում առկա խնդիրների մասին

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Նորայր Մելքոնյան

Քվեարկությամբ հաստատվեցին օրակարգի հարցերը

Իր զեկուցման մեջ անցած մեկ տարվա համայնքում կատարված աշխատանքների մասին ներկայացրեց հետևյալը՝

համայնքում ծրագրեր, մեծ մասշտաբի աշխատանքներ չեն իրականացվել՝ համայնքի ամբողջ տարածքը սողանքային գոտում գտնվելու պատճառով:

Ոռոգման գործընթացը և բժշկական սպասարկումը անցկացվում է շարժական տնակներում:

Մեծ ուշադրություն է դարձվում համայնքի սանիտարական վիճակի էլ ավելի բարձրացման ուղղությամբ, գյուղամիջյան ճանապարհներին առաջացած փոսերը խճաքարերով և ավազով վերանորոգվել են:

Խմելու ջրի հետ առաջացած խնդիրները կազմակերպվել և լուծվել են բնակիչների հետ միասին:

Բնակիչների հիմնական խնդիրը բնակելի տներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհատույց աջակցության հատուցումն է՝ նոր բնակարաններ ձեռք բերելու համար:

2012թ. բյուջեն կատարվել է հետևյալ կերպ՝

գույքահարկ՝	102.2 %
տեղական տուրք	100 %
հողի վարձավճար՝	94 %

Զեկուցողի ավարտից հետո եղան մտքերի փոխանակություն և առաջարկություններ՝ առկա խնդիրների լուծման վերաբերյալ:

Վերջում համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց՝ ժողովին ներկա գտնվելու և առկա խնդիրների քննարկմանը մասնակցելու համար, և խոստացավ հնարավորության դեպքում լուծել որոշ հրատապ խնդիրներ:

Ժողովի նախագահ՝ Ն. Մելքոնյան

Քարտուղար՝ Ա. Ազիզյան